

ՀԵՂՈՒԿՆԵՐԻ, ՆՐԲԱՔՍՈՒՔՆԵՐԻ ԵՎ ՔՍՈՒՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկզբունքը

Հեղուկները, նրբաքսուքները եւ քսուքները կարող են առանձնապես զգայուն լինել արտադրության ընթացքում մանրէային եւ այլ աղտոտման նկատմամբ: Ուստի, հատուկ միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ աղտոտումից խուսափելու համար:

Տարածքները եւ սարքավորումները

1. Խորհուրդ է տրվում օգտագործել արտադրության եւ տեղափոխման փակ համակարգեր՝ արտադրանքն աղտոտումից պաշտպանելու համար: Այն արտադրամասերը, որտեղ արտադրանքը կամ մաքուր տարաները գտնվում են բաց վիճակում, որպես կանոն, պետք է արդյունավետ կերպով օդափոխվեն ֆիլտրված օդով:
2. Ցիստեռները, տարաները, խողովակաշարերը եւ պոմպերը պետք է նախագծվեն եւ տեղակայվեն այնպես, որ հնարավոր լինի դրանք հեշտությամբ մաքրել, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ ախտահանել: Սարքավորումները, մասնավորապես, պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որ դրանցում նվազագույնի հասցված լինեն դժվար հասանելի հատվածները եւ մակերևույթները, որոնցում կարող են կուտակվել նյութերի մնացորդներ՝ նպաստելով մանրէների բազմացմանը:
3. Հնարավորինս պետք է խուսափել ապակուց պատրաստված սարքավորումների կիրառությունից: Բարձր որակի չժանգոտվող պողպատը այն նյութն է, որը նախընտրելի է սարքավորումների այն մասերի համար, որոնք շփվում են արտադրանքի հետ:

Արտադրությունը

4. Արտադրության մեջ օգտագործվող ջրի քիմիական եւ մանրէաբանական որակը

պետք է սահմանվի եւ ենթարկվի մոնիտորինգի: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ջրային համակարգերի շահագործմանը՝ մանրէների բազմացման ռիսկից խուսափելու համար: Ջրային համակարգերի քիմիական ախտահանումից հետո պետք է կիրառել վալիդացված լվացման ընթացակարգ՝ ապահովելու համար ախտահանող նյութերի արդյունավետ հեռացումը:

5. Բալք ցիստեռններով ստացված նյութերի որակը պետք է ստուգել՝ նախքան պահեստային ցիստեռնների մեջ դրանք տեղափոխելը:
6. Նյութերը խողովակաշարերով փոխադրելիս՝ պետք է հետեւել, որ դրանք փոխադրվեն ճիշտ նշանակման վայր:
7. Թելեր եւ այլ աղտոտիչներ արտազատող նյութերը, ինչպիսիք են, օրինակ՝ կարտոնե կամ փայտե տակդիրները, չպետք է բերվեն այն տարածքներ, որտեղ արտադրանքը կամ մաքուր տարաները գտնվում են բաց վիճակում:
8. Անհրաժեշտ է ապահովել խառնուրդների, դեղակախույթների եւ այլնի համասեռությունը՝ դրանց լցման ընթացքում: Խառնման եւ լցման պրոցեսները պետք է վալիդացվեն: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել լցման պրոցեսի սկզբում, դադարներից հետո եւ պրոցեսի վերջում՝ ապահովելու համար համասեռությունը:
9. Եթե պատրաստի արտադրանքը անմիջապես չի փաթեթավորվում, պետք է սահմանել դրա պահեստավորման առավելագույն թույլատրելի ժամանակն ու պահեստավորման պայմանները եւ հետեւել դրանց պահպանմանը: